ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 մայիսի 2024 թվականի թիվ 52-Ա

ք.Երևան

«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի մայիսի 02-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 21 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս, ինչպես նաև ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով, 2024 թվականի փետրվարի 07-ին օպերատորի գործունեություն իրականացնող ընկերությունների ղեկավարներին է հասցեագրել Հանձնաժողովի նախագահի թիվ Ե/01/04.2/140-24 գրությունը:

Գրությամբ ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող ընկերությունների ղեկավարներից պահանջվել է Հանձնաժողով ներկայացնել վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ամբողջական ցանկ՝ ներառելով յուրաքանչյուր ծրագրի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

– ծրագրի անվանումը,

– ծրագրի իրավատիրոջ անվանումը,

– ծրագրի վերահաղորդման իրավունքը հավաստող փաստաթղթի (պայմանագրի) համարը և կնքման ամսաթիվը,

– պայմանագրի գործողության ժամկետը,

– պայմանագրի ժամկետի երկարաձգման մասին տեղեկություններ:

Ցանկը պետք է ներառի նաև ցանցային օպերատորի անվանումը և ներկայացման ամսաթիվը:

Գրությամբ նշվել է նաև, որ վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ամբողջական ցանկում ներառված որևէ տեղեկատվության փոփոխության դեպքում, մասնավորապես՝ պայմանագրի դադարեցման, երկարաձգման, նոր պայմանագրի կնքման, տեսալսողական

ծրագրի անվան, իրավատիրոջ փոփոխության, հեռարձակումը դադարեցնելու և այլնի դեպքում անհրաժեշտ է ողջամիտ ժամկետում տեղեկացնել Հանձնաժողով:

Ցանցային օպերատորի կողմից վերը նշված գրությանն ի պատասխան վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն Հանձնաժողով չի ներկայացվել:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2024 թվականի մայիսի 02-ին «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ ցանցային օպերատոր) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2024 թվականի մայիսի 03-ի թիվ Ե/04/04.1/366-24 գրությամբ ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Ցանցային օպերատորը վերը նշված գրության վերաբերյալ ևս որևէ պարզաբանում և բացատրություն չի ներկայացրել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Կարգավորող պետական մարմինը սույն օրենքով սահմանված սուբյեկտներից, պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից պահանջում և ստանում է անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն:

Նույն Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի սահմանումով՝ «1. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

5. Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին:»

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Փաստենք, որ ցանցային օպերատորը 2018 թվականի հուլիսի 20-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ Լոռու մարզ) և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Ցանցային օպերատորը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում է իրավական հետևանքներ, և

ցանցային օպերատորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում պարտավոր էր պահպանել **Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 49-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերով և 60-րդ հոդվածի 8-րդ մասով** սահմանված դրույթների պահանջները:

Ավելին, Հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 07-ին օպերատորի գործունեություն իրականացնող ընկերությունների ղեկավարներին է հասցեագրվել Հանձնաժողովի նախագահի թիվ Ե/01/04.2/140-24 գրությունը Օրենքի դրույթների պահանջների կատարման անհրաժեշտության մասին:

«ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը չի պատասխանել և չի ներկայացրել կարգավորող պետական մարմնի կողմից պահանջված անհրաժեշտ տեղեկատվությունը, չնայած նրան, որ ունեցել է բավարար ժամանակ այն կատարելու համար: Հանձնաժողովի գրությունն ուղարկվել է 2024 թվականի փետրվարի 07-ին, իսկ տեղեկատվությունը ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2024 թվականի մարտի 20-ը, այսինքն՝ մեկ ամսից ավելի է ունեցել ցանցային օպերատորը կատարելու համար իր՝ Օրենքով սահմանված պարտավորությունները և տրամադրելու Հանձնաժողովի նախագահի գրությամբ պահանջված տեղեկատվությունը, ինչը չի արել:

Այսպես, հիմք ընդունելով Օրենքի վերը նշված դրույթները և ձեռք բերված փաստերը՝ արձանագրում ենք, որ «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությունը **Հանձնաժողովի նախագահի գրությամբ պահանջված** և օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերն ու այլ տեղեկատվությունը **գրությամբ սահմանված ժամկետում և կարգով չի ներկայացրել,** ինչն էլ հիմք է հանդիսանում Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված իրավախախտումը արձանագրելու և պատասխանատվություն կիրառելու համար:

<u>Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն</u>՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

<u>Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝</u> Կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) **տուգանք.**

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

<u>Վերը նշվածը առերևույթ պարունակում է «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասի հատկանիշներ,</u> այն է՝ կարգավորող պետական մարմնի որոշմամբ կամ նախագահի գրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր

կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացնելը կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Այսպես, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 49-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, 60-րդ հոդվածի 8-րդ մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց***՝

1. «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 27-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Հանձնաժողովի նախագահի գրությամբ պահանջված՝ վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ամբողջական ցանկը և այլ տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացնել 20-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄԱՅ ՆԵՏ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ.ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. մայիսի 23
ք.Երևան